3527

Ռ. ԽԱՆԱԶԱՏ

ԻԴԷԱԼԻԶՄ

թէ

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

Ռասմնասիրութիւն

ԹԱՒՐԻԶ

Ատրպատականի Հայերի թեմական տպարան
Ցիւռատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի

1904

№ 2 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՍՐՊԵՏԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ (ԹԱՒՐԻԶՈՒՄ) ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽՈՒՄ Է

---

1. Լ. Տolսtoյի *Մարդիկ ինչի են ապրում* թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 դր.
2. » » *Կարմիս-Բուդդայական պատմուածք* թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. *Օտար փոռնջեր* Ա. Հիւսք. Ձիլլերից թարգ. Մ. Վ. Մագսուդեանի 1 դր.
4. Կ. Կաուցկի *Կոլոնիական քաղաքականութիւն.* թարգ. Ռ. Խանազատեանի 2 դր.
5. Ռ. Խանազատ *Իդեալիզմ թէ Մատերիալիզմ* Ուսումնասիրութիւն 10 շհ.
6. Ատրպատականի Հայոց Հիմնական և Հայաստանեայց եկեղեցու ծիսական կանոնադրութիւն 2 դր.

Դիմել՝ TAURIS A L' IMPRIMERIE DU DIOCÉSE ARMÉNIEN

14 JUL 2009

Ռ. ԽԱՆԱԶԱՏ

0.50 2 4 5

268/271

ԻԴԷԱԼԻԶՄ

300
141+146
Խ-22 ա
1326-ԽԱ

թէ

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

1003
Լ 1825

Ուսումնասիրութիւն

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԱՒՐԻԶ

Ատրպատականի Հայերի Թեմական տպարան
Յիշատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի

1904

6 MAY 2013

3527

ԱՐՏԱՏՊԱԾ Է

ՏԱՐԱՋ Հանդիսի № № 4—11— 1900 թ.

ԻԴԷԱԼԻԶՄ ԹԷ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

Ներկայ յօդուածով մենք կամենում ենք Տարազի ընթերցողներին ծանօթացնել այն մտքերի ու գաղափարների մրցման հետ, որ վերջին տարիներում տեղի է ունենում Ռուսաց մամուլի մէջ և որ գնալով, թէ աւելի հետաքրքրական և թէ աւելի սուր կերպարանք է ընդունում: Կարծում ենք, որ աւելորդ է բացատրել, թէ որ ստիճան ռուսաց կայսերութեան մէջ ապրող Հայերիս կեանքը սերտ կապած է ամբողջ պետութեան կեանքի հետ և թէ որ ստիճան մենք, թէ մեր մտքերով ու գաղափարներով և թէ մեր գործունէութեամբ, ուղղակի հետևողներ ենք ռուսաց գրական ու հասարակական գործիչների, ինչպէս որ այս վերջինները հետևողներ են արևմտեան Եւրոպացիների: Ռուսաստանը, դանդաղ աշխարհագրական ու պատմական հանգամանքների շնորհով արևմտեան Եւրոպական երկրներից ուշ է սկսել զարգանալ, բայց մէկ անգամ արդէն զարգացման ու յառաջադիմութեան ուղիի վրա կանգնելով, նա սկսել է հաստատ քայլերով առաջ գնալ իր կարապետների յետևից ու իր յետևից էլ նոյն ուղիով քարշ է տալիս և իր հպատակ

մանը ազգութիւններին, որոնց թւում և հայերին: Ուրեմն այն մարդն ու գաղափարները, որոնցով ասացինք, այժմ զբաղած է ռուսաց մամուլը, ոչ նոր են և ոչ զուտ ռուսական. այդ գէղերը սկսել են արևմտեան Եւրոպայում դեռ 40—50-ական թւականներին, բայց ռուսաց տնտեսական ու սոցիալական կեանքի յետամնացութեան պատճառով, հիմա են միայն սաստիկ զբաղեցնում ռուսաց մամուլին: Մեր խօսքը «իդէալիզմ» և «տնտեսական մատերալիզմ» անունը կրող ուղղութիւնների կամ աշխարհայեցողութիւնների մասին է, կամ աւելի ճիշտն ասել, այդ աշխարհայեցողութիւններով մարդկային պատմութիւնն ու յառաջադիմութիւնը բացատրելու և լուսաբանելու մասին է:

I Դեռ շատ հին ժամանակներից սկսած՝ գանազան ազգերի մտածողները, փիլիսոփաները և մանաւանդ հասարակական խնդիրներով զբաղող գիտնականները միշտ աշխատել ու գլուխ են յոգնեցրել իմանալու համար, թէ արդեօք ինչպէս է ընթանում մարդկային պատմութիւնը, ուր է տանում մեր յառաջադիմութիւնը. գէպի բարօրութիւն, թէ գէպի խեղճութիւն: Եթէ պատմութիւնն է մարդոց համար և ոչ մարդիկ պատմութեան համար, ուրեմն յառաջադիմութիւնը պիտի մարդոց միշտ գէպի երջանկութիւն ու ազատութիւն տանի, այն ինչ իրապէս ճիշտ հակառակն է լինում. քաղաքակրթութեան աւելի ստոր աստիճանի վրա կանգնած ցեղերը աւելի ազատ

ու երջանիկ են զգում իրանց, քան աւելի քաղաքակրթածները: Արդ՝ ինչից է արդեօք, որ մարդկութիւնը մի կողմից, բանի գնում, քաղաքակրթւում է, գոյութեան կռիւի միջոցները գնալով հեշտանում են, երկրի հարստութիւնն աւելի ու աւելի մեծանում է, իսկ միւս կողմից մարդկութեան մեծամասնութիւնն աւելի ու աւելի թշուառանում է, դերի դառնում փոքրամասնութեան, որ անխղճաբար հարստահարում, կեղեքումու տանջում է այդ մեծամասնութեան: Եւ չէ՞ կարելի արդեօք կամ ինչ միջոցներով այդ հակասութեան— անօմալիան—առաջն առնել ու այնպէս անել, որ մարդոց դարերոր տառապանքներին վերջ դրւի. մարդիկ բոլորն էլ հաւասար բարեկեցութիւն, անհատական ազատութիւն ունենան և ամէնքն էլ հաւասարապէս օգտին գիտութեան ու քաղաքակրթութեան տուած բարիքներից: Այս խնդիրները լուծելու և մի գրական որոշում տալու համար, այդ գիտնականները մարդկութեան հեռաւոր անցեալի մէջ էին խորասուզւում. ուսումնասիրում էին վայրենի ցեղերին, նրանց նիստ ու կացը. նրանց փոխադարձ յարաբերութիւնները, բարոյականութիւնը, աշխարհայեցողութիւնները և այլն, որ կարելի լինի իմանալ, թէ արդեօք մարդիկ երբէ բարի են ծնւում, թէ չար: Եթէ բարի են ծնւում, կնշանակէ քաղաքակրթւած ազգերի թշուառութեան գլխաւոր պատճառը հէնց ինքը քաղաքակրթութիւնն է, կամ գուցէ և քաղաքակրթութիւնը, ինքն ըստ ինքեան, վատ բան չէ, միայն թէ մարդոց պակասութեան շնորհով վատ ընթացք է ստացել: Ուրեմն, խելօք մարդիկ, այսինքն իրանք- գիտնականները-կարող են և պէտք է քարոզեն ու հասկացնեն այդ

ընթացքի սխալ կողմերը մարդոց, երկրի իշխաններին ու պետերին, բացատրեն և ցույց տան աւելի ուղիղ ճանապարհ, որ նրանք վերջապէս ուղղեն իրանց պապերի տգիտութիւնից առաջացած սխալները։ Իսկ եթէ մարդիկ իրենք չար են ծնւում, դրանից էլ չպէտք է յուսահատուել. չարութիւնը զսպելու համար կառավարութիւն և օրէնքներ կան, միայն անհրաժէշտ է դարձեալ, որ գիտնականները կառավարիչներին ու օրէնսդիրներին բացատրեն մարդկային պատմութեան արած սխալները, աւելի նպատակայարմար օրէնքներ ու միջոցներ ցոյց տան նրանց, կամ թէ չէ,—որ աւելի կարուկ ճանապարհն է,—հէնց իրանց—գիտնականների ձեռքը տան կառավարչական ամբողջ դէկը և այն ժամանակ նրանք ամէն բան կըկարգադրեն այնպէս, որ մարդկութեան համար երկնային դրախտ կստեղծի երկրի վրա։ Մի խօսքով բոլոր մտածողներն էլ վերջիվերջոյ գալիս էին այն եզրակացութեանը, թէ մարդոց թշուառութեան պատճառը գլխաւորապէս իրանց տգիտութիւնն է, թէ նրանք մոլորուել ու շեղուել են բնութեան տուած օրէնքներից. բաւական է, որ նրանք հասկանան ու ըմբռնեն իրանց—գիտնականների—ցոյց տուած մոլորութիւնները, լսեն նրանց և այն ժամանակ շատ հեշտութեամբ կուղղի անցեալի սխալը ու միանգամից վերջ կըտրի մարդկութեան կրած բոլոր տառապանքներին։ Այս ձևով խնդիրը որոշելուց յետոյ, պատմութեան մէջ ամէն բան գաղափարից ու մարդոց կամքից կախեալ համարելով, այդ իդիալոգները հաղարաւոր հատորներով զանազան յեցեպանկեր էին ներկայացնում մարդկութեանը, նրա տնտեսական, հասարա-

կական ու քաղաքական խնդիրները կարգադրելու համար։ Եւ ի հարկէ, զարմանալի չէ, որ նրանց բոլորի ցեցեպանները էլ տարբերվում էին միմիանցից ու ամէն մէկը իր ուղղութիւնն ու գաղափարներն էր գովում և իրանն էր առաջարկում ընդունելու։*)

Բայց ցաւալին այն է, որ մինչ այդ գիտնականները իրանց մեծամեծ հատորներով ցեցեպանները էին գրում, մարդկային կեանքն ու պատմութիւնը շարունակում էին իրանց գծած ուղիղով առաջ գնալ ու զարգանալ. իսկ մարդկութեան մեծամասնութիւնը շարունակում էր միշտ միևնոյն գժոխքի մէջ մնալ, ինչ էր և առաջ։ Ճիշտ է, Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ, արևմտեան Եւրոպայի զանազան երկրներում և վերջն էլ Ռուսաստանում, մէկը միւսի յետևից սկսում են կարատուել ճորտութեան շղթաները, բայց, ինչպէս ստորև կըտեսնենք, այդ ոչ թէ այն ժամանակւայ գիտնականների քարոզած մտքերի ու գաղափարների շնորհով է լինում, այլ լոկ արդիւնաբերական միջոցների ու տեխնիկայի զարգացման և տնտեսական յարաբերութիւնների փոխելու շնորհով։ Սակայն առաջին անգամից այդ իդիոլոգ գիտնականները մեծ հրճւանքի մէջ էին. նրանք այնպէս էին հաւատացած, թէ անարգ ճորտութիւնը իրանց քարոզած գաղափարների ազդեցութեան տակ խորտակւեց։ Բայց յետոյ, ո՞ր-

*) Տես. Н. Карелинъ „Жанъ Жакъ Руссо. Опытъ характеристики его общественныхъ идей“. Հրատարակութիւն Պ. Բ. Ստրուվէի. Պետերբուրգ. 1899 թ.

չափ մեծ էր նրանց հիասթափութիւնը, երբ նկատեցին, թէ իրանք սաստիկ սխալւել են, որովհետև, թէև ճորտութեանը վերջ արւեցաւ, բայց իրաւապէս մարդկի դարձեալ ճորտերն մնացին, այս անգամ պրոլետարիատի ամենայն սեպհականութիւնից զուրկ բանւորների ձևի տակ։ Եւ յիրաւի, կապիտալիստական արդիւնաբերութիւնը, իր ունեցած առաւելութիւնների հետ միասին, այնպիսի մի թշառութիւն, խեղճութիւն ու բարքերի ապականութիւն առաջ բերեց, որ ամէնքն էլ սոսկացին...

Սկսեց հասարակական գիտութիւնների նոր ուսումնասիրութիւն, նոր հետազօտութիւններ և հասարակական ու քաղաքական կազմակերպութեան նոր ու բազմատեսակ բացատրութիւններ։ Սնալով միշտ միևնոյն ուտոպիաները, հաւատարիմ կենալով միշտ այն սկզբունքին, թէ մարդն ի իւր ճակատագրի տէր ու պամուբեան համար ուղի գծողը, թէ մարդկային բոլոր թշառութիւնների պատճառը, տգիտութիւնն է, իրանց շարն ու բարին չհասկանալն է և այլն, նրանք այս անգամ իրանց բացատրությունները ոչ միայն երկրի կառավարիչներին ու seigneur-ներին էին առաջարկում, այլ և հասարակ ժողովրդին. բանւորներին ու արհեստաւորներին, հրաւիրելով նրանց ընդհանուր ոյժերով այնպիսի արհեստանոցներ ու գործարաններ հիմնել, որտեղ բոլորն էլ հաւասարապէս աշխատեն ու իրանց արդիւնաբերութիւնը հաւասարապէս բաժանեն իրանց մէջ և այլն։ Հարուստ իդիլիոզ անգլիացի Ռոբերտ Օուէնի Անգլիայում ու Ամերիկայում այդ սկզբունքներով գործարաններ հիմնելը, կոլոնիա հաստատելը և դրանց պատճառով բոլորովին մնանկանալը— ում յայտնի չէ։ Իսկ

Պրուդոնի և Լուի Բլանի քարոզած ազգային բանկերը ու զանազան բանւորական ասոսիացիաները (արդիւնաբերական ընկերութիւններ) հիմնելու գաղափարներով մինչև այսօր էլ դեռ հրապուրւողներ կան թէ Արևմտեան Եւրոպայում և թէ Ռուսաստանում. (ինչպէս օրինակ Պ. Լաւիցկին)։

Բայց որչափ էլ չաշխատեցին այդ քաղաքագետներ ու սոցիալոգ բժիշկները. որչափ էլ նրանք խիստ միջոցներ չառաջարկեցին հիւանդոտ հասարակական ու քաղաքական կազմակերպութիւնը բժշկելու համար, դարձեալ ոչինչ չօգնեց. յամառ պատմութիւնը շարունակեց միշտ իր գծած ճանապարհով ընթանալ ու զարգանալ. կապիտալիստական արդիւնաբերութիւնը գնալով զարգացաւ, կապիտալիստների հարստութիւնը չտեսնուած մեծութեան հասաւ, իսկ արդիւնաբերութիւնը իր մրցումով ստիպեց, ոչնչացրեց բոլոր ընկերական հիմունքներով կազմած մասնաւոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները։ Բազցած պրոլետարիատը, գնալով բազմացաւ, իսկ իդիլիոզ անհատը մնաց շարած իր անզօրութեան և... մարդոց ագիտութեան վրա, որ խուլ մնացին իր գեղեցիկ քարոզներին...

Եթէ մենք պատմենք, թէ այդ իդիլիոզ գիտնականների ու հասարակական գործիչների արած վերջնական հաշիւները սիրալ դուրս եկան մարդկային պատմութեան վերաբերեալ, եթէ ասում է, թէ նրանց մտածողութեան հիմնական ձևը կամ տէորիան սխալ էր, այդ, ի հարկէ, չէ նշանակում, թէ նրանց գիտական աշխատութիւնների ու վեհ ձգտումների նշանակութիւնը զրանով պակասում է։ Նրանց գործերը, անկեղծ ու բարձր գաղափար-

ները, հասարակական խնդիրների վերաբերեալ արած հետազոտութիւններն ու ուսումնասիրութիւնները այնպիսի մի գանձ են մարդկայինմտքի մշակութեան գործում, այնպիսի վիթխարի արձաններ են, որ հաղիւ թէ մարդկութիւնը կարողանայ նրանց մոռանալ, իսկ նրանց սխալները շատ հասկանալի ու նոյն իսկ բնական են դառնում, եթէ պատմութեան ու հասարակական խնդիրների վրա նայենք տնտեսական մատերիալիզմի տէօրիայի տեսակէտով։ Բայց նախ քան այդ տէօրիայի մասին խօսելու, ասենք մի քանի խօսք էլ այն մասին, թէ ինչպէս արևմտեան Եւրոպայի իդէալիզմը անդրադարձաւ ռուսաց գրականութեան ու կեանքի մէջ։

II. Ռուսաց գրականութիւնը ինչպէս յայտնի է, շափազանց մանուկ է. նրա փայլը սկսեց քառասնական թուականներին, երբ արևմտեան Եւրոպայի յեղափոխական շարժումներից ոգեորուած ռուսաց երիտասարդութիւնն էլ սկսեց բուռն կերպով աշխատել ճորտերի ազատութեան համար։ Ում յայտնի չեն Բելինսկու, Հերցենի, Գրանովսկիի և այլոց անուններն ու աշխատութիւնները, որոնք եւրոպական իդիոլոգների օրինակին հետևելով, շարունակ անհատական ազատութիւն և ընդհանուր ժողովրդի բարեկեցութիւն էին քարոզում։ Այդ ժամանակների ռուսաց հասարակական ու գրականական գործիչները երկու կուսակցութիւնների էին բաժանուել. մէկը ազատամիտները, որոնք յայտնի են «արևմտեան (западникъ) անունով, իսկ միւսը «սլաւիանոֆիլների» կուսակցութիւնն էր, որոնց պարագլուխն էին Ակսակով և ուրիշները։

Այդ երկու կուսակցութիւնների գլխաւոր տարբե-

րութիւնը նրանումն էր, «արևմտականները», ամբողջապէս ընդունելով եւրոպացիների գիտական տէօրիաները ու աշխարհայեցողութիւնները, շատ իրաւացի կերպով ասում ու պնդում էին թէ՝ ռուս ժողովուրդը եւրոպական ազգերի մի ընտանիքը կազմելով, ենթարկուած է միևնոյն պատմական օրէնքներին, հետևապէս նա էլ պիտի անցնի առաջադիմութեան ու զարգացման նոյն ուղիով ինչ ուղիով որ անցել են եւրոպական ազգերը։ Եւ խնդրի վրա այսպէս նայելով, նրանք, ինչպէս ասացինք, իրենց դաղափարներով ու հասարակական գործունէութեամբ ամբողջապէս հետևում էին եւրոպական ազգերի առաջադէմ իդիոլոգ կուսակցութիւններին, իսկ սլաւիանոֆիլները. նոյնպէս ընդունելով անհատի ներգործական դերը ազգերի պատմութեան մէջ, զանազան փաստերով հաստատում էին, թէ սլաւոնական ազգը շատ ու շատ կողմերով տարբերուում է Ֆրանսիացիներից, գերմանացիներից և այլն ուստի նա պէտք է բոլորովին տարբեր ուղիով զարգանայ ու առաջադիմէ։ Նրանք շատ անգամ այնպիսի ոգեորութեան էին հասնում, որ աշխատում էին հաւատացնել, թէ վերջիվերջոյ եւրոպական ազգերը պէտք է հետևին ռուսաց օրինակին ու դրանցից շատ լաւ բաներ պիտի փոխ վերցնեն, և ոչ թէ ռուսները նրանցից...

Մենք այստեղ սլաւիանոֆիլներով չենք զբաղուիլ. մեզ համար աւելի հետաքրքիր են «արեւմտականները»։ Այդ կուսակցութիւնը իր բոլոր սկզբունքներին հաւատարիմ մնայ մինչև այն ժամանակները, երբ ճորտութիւնը կատարելապէս վերջ դրուեցաւ ամբողջ Եւրոպայում. արևմտեան երկիրներում 40-ական թուականներին, արիւնա-

հեղ յեղափոխութիւններից յետոյ, իսկ Ռուսաստանում վաթսունական թւականներին, առանց արիւնահեղութեան: Իսկ դրանից յետոյ «արեւմտականների» առաջ մի ոսկայի տեսարան է բացւում. նրանք սարսուռ են զգում, նկատելով, թէ ինչպէս արեւմտեան երկրներում կապիտալիստական արդիւնաբերութեան զարգանալով, բազմանում է և քաղաքի պրոլետարիատը, քայքայւում է բնական տնտեսութիւնը, ապականում են ժողովրդի բարքերը. մի խօսքով նրանք տեսնում են, որ այդ ազգերի յառաջադիմութեան ուղին սաստիկ փշոտ է և, վախենալով, թէ մի գուցէ Ռուսաստանն էլ այդ նոյն ուղիով ընթանայ, նրանք կամաց-կամաց սկսում են իրանց եւրոպացի ուսուցիչների հետ այլես չհամաձայնել շատ խնդիրների մէջ կամ աւելի ճիշտ է ասել, նրանք այս անգամ ուսուցիչներ են ընտրում աւելի յետամնաց առաջադիմականների շարքերից և այդպէսով իրանք էլ հետզհետէ յետ են մնում արեւմտեան իսկական առաջադիմականներից, թէև Ռուսաստանի վերաբերեալ, նրանք չեն դադարում ամենածայրայեղ առաջադիմականները մնալ այն ժամանակներում: Օրինակի համար՝ այն ժամանակ, երբ եւրոպական սոցիոլոգները, իրանց կատարած հետազօտութիւնների հիման վրա, գալիս էին այն եզրակացութեանը, թէ բնական տնտեսութիւնը հետզհետէ ամբողջապէս տեղի է տալիս կապիտալիստական արդիւնաբերութեանը, թէ նահապետական համայնական հողատիրութիւնը արագութեամբ քայքայւում է, թէ գիւղացի ժողովուրդը պատմութեան մէջ այլես շատ յետադիմական ու պահպանողական տարր է կազմում, ուստի առաջա-

դիմականների ամբողջ ուշադրութիւնը պիտի դառնայ քաղաքներում համախմբուած պրոլետարիատի վրա, որոնց թիւը զնալով բազմանում է և որոնք, իրանց կեանքի պայմանների շնորհով, միակ առաջադիմական տարրն են կազմում. այն ժամանակ, երբ հոգայ Լասալը ճիշ էր արձակում պրոլետարի-բանւորներին՝ համախմբուել ու զուտ քաղաքական կուսակցութիւն կազմել. ճիշտ այդ ժամանակ, ասում ենք Նշանաւոր ռուս «արեւմտական» քաղաքատնտես, սոցիոլոգ և հրապարակախօս Չերնիշևսկին ու նրա հետևողները արդէն իրանց թարմութիւնը կորցրած, Սէն-Սիմոնի, Ֆուրիէի և Պրուդոնի ուտոպիաներով սնուած, հիանում էին ռուս մուժիկների կեանքով, նրանց նահապետական նիստ ու կացով, բարքերով և նամանաւանդ նրանց պահպանած համայնական հողատիրութեամբ, որը, նրանց ասելով, մի շատ լաւ կատարեալ պատրաստի հող էր ներկայացնում, Սէն-Սիմոնի, Պրուդոնի և միւսների ուտոպիաները գործադրելու համար: Ո՞րչափ աշխատանք ու եռանդ են թափել Չերնիշևսկին ու նրա հետևողները statistikական թւանշաններով հաստատելու համար, թէ Ռուսաստանում գիւղական համայնքը դեռ բոլորովին քայքայման նշաններ չէ ցոյց տալիս այլն: Միակայն ոչ մի լոպէ չէ կարելի ենթադրել, թէ Չերնիշևսկին պահպանողական կամ պակաս տաղանդի տէր մարդ էր, գիցուք հէնց Լասալից, բոլորովին ոչ: Մենք կարծում ենք, որ եթէ նա Եւրոպայում ապրելիս լինէր, Լասալից պակաս չէր գտնիլ, բայց Ռուսաստանում ապրելով, նրա դաղափարները չափազանց տարբերւում էին իր ժամանակակից եւրոպական առաջադիմականներից և, նրանց

համեմատութեամբ, շատ յետամնաց էին։

Արդ՝ ինչով բացատրել ուրեմն Չերնիշևսկիի ու նրա հետևողների գաղափարների յետամնացութիւնը, ինչով բացատրել այն, որ մինչև ճորտութեան վերացումը նրանք հաւատարիմ հետևողներ էին իրանց եւրոպական ուսուցիչների, իսկ այդ պատմական մեծ քայլից յետոյ, սկսում են յետ մնալ նրանցից։ Թէ այդ և թէ ընդհանրապէս բոլոր իդիոլոգների, վերևում ասած, սխալները կատարելապէս պարզւում են, եթէ, ինչպէս ասացինք, պատմութեան և հասարակական խնդիրների վրա նայենք տնտեսական մատերիալիզմի տեսակէտով, և ահա թէ ինչպէս։

III. Մինչև ճորտութեան վախճանը Ռուսաստանն ու եւրոպական միւս երկիրները pus երեւոյթին գտնւում էին պատմական, իրարից ոչ այնքան հեռու շրջանների մէջ. կարծես թէ Ռուսաստանումն էլ միևնոյն տնտեսական յարաբերութիւնները, միևնոյն հասարակական, սոցիալական ու քաղաքական պայմանները, կարգերն էին տիրում, այն ինչ իրապես բոլորովին այդպէս չէր։ Արևմտեան եւրոպական երկրներում, դեռ արիւնահեղ յեղափոխութիւններից առաջ, ֆէոդալականութեան ծոցում, արդիւնաբերութեան միջոցների և առևտրի կամաց-կամաց զարգանալով, նախկին բնական արդիւնաբերութեան կողքին, առաջ էր եկել կապիտալիստական արդիւնաբերութիւնը, որի շնորհով փոխել էին և մարդոց ու դասակարգերի տնտեսական ու հասարակական յարաբերութիւնները։ Հողը և հողատիրութիւնը, որ ամեն բան էին բնական տնտեսութեան ժամանակ, կորցնում են իրանց նախ-

կին նշանակութիւնը և տեղի են տալիս գրամին ու գրամատիրութեանը։ Այն բուրժուազիան, որ առաջ ոչ մի նշանակութիւն չունէր ու զուրկ էր ամէն քաղաքական իրաւունքներից, որի վրա ֆէոդալական իշխաններն ու հողատէր ազնները արհամարհով էին նայում և մինչև իսկ ստորութիւն էին համարում ձեռք տալ նրանց, կապիտալիստական արդիւնաբերութեան ու վաճառականութեան զարգանալով, այնպիսի գրամական ոյժ և նշանակութիւն է ձեռք բերում, որ այդ նոյն իշխանները նրանցից փող վերցնելու դիտումով, նրանց բարեկամութիւնն են փնտռում, իրանց անմատչելի սալօնները են հրաւիրում ու քաղցր ժպտում են նրանց երեսին։ Երկրի հողերը մեծ մասամբ ծախում կամ գրաւ են դրւում գրամատէր բուրժուայի մօտ, թէ կառավարչական հետզհետէ աճող ծախսերը հոգալու և թէ, նոյն բուրժուազիայի ստեղծած նորանոր, պէտքերին և հաճոյքներին գոհացում տալու համար։ Այն տեղն է հասնում, որ մինչև անգամ անարգւած բուրժուաները մինիստրութեան բարձր պաշտօնների են հրաւիրւում...

Տնտեսական յարաբերութիւնների այսպէս փոխու�յետոյ, շատ բնական էր, ի հարկ է որ այդ, մինչև այդ ժամանակ հոյս հպատակ. իսկ այժմ երկրի իրական տէրը դարձած բուրժուազիան. իր և իր նման զրկւածների համար քաղաքական իրաւունքներ պահանջէր։ Այդ պահանջը նամանաւանդ ստիպողական էր դառնում այն պատճառով, որ ֆէոդալական օրէնքներն ու կարգերը մեծ արգելքներ էին կապիտալիստական արդիւնաբերութեան յետագայ զարգացման ու բարգաւաճման։ Օրինակի

համար վերցնենք հենց այն, որ գործարանների հիմնելով, գործատերերին անհրաժեշտ էին ազատ և աժան գործաւորներ ունենալ, այն ինչ ճորտերը չէին կարող իրանց տէրերի հողերը անմշակ թողնել ու գնալ գործարաններում աշխատելու։ Կընչանակէ, արդիւնաբերական միջոցների (աշխատանքի) բաժանումը, մեքենաները և այլն) փոփոխման պատճառով, առաջ եկան այնպիսի պայմաններ ու հանգամանքներ. որոնց շնորհով ճորտութիւնը այլևս անկարող էր իր գոյութիւնը պահպանել։ Եւ ընկաւ, ոչ թէ XVIII ու XIX դարերի փիլիսոփաների մեծահատոր շարադրութիւնների ազդեցութեամբ. այլ իրերի բնական ընթացքի, տնտեսական ներքին փոփոխութիւնների պատճառով։

Ռուսաստանում սկսեցին պատմական պրոցեսը փոքր ինչ տարբեր կերպարանքի տակ է կատարում։ Թէև այստեղ էլ ճորտութեան վերացման պատճառները դարձեալ տնտեսական են (ուրիշ պատճառներ չեն էլ կարող լինել), բայց դրանց կարելի է ասել արտաքին պատճառներ անուանել։ Ինչպէս ասացինք, Ռուսաստանը, զանազան պատմական հանգամանքների շնորհով ուշ է սկսել զարգանալ, բայց նա իր աշխարհագրական դիրքի և շարունակ իր դրացի զարգացած ազգերի շարքում գտնվելու պատճառով, ստիպուած է եղել պատմական կայարաններում փազիսներում—շատ երկար չդիմանալ. կամ, ասելի ճիշտ է ասաց այդ դրացի զարգացած երկրներում առաջացած տնտեսական ու քաղաքական փոփոխութիւնները, անմիջապէս Ռուսաստանի վրա ազդելով՝ այստեղ էլ են առաջացնում նոյնանման փոփոխութիւններ։ Այդ փոփոխու-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
31 1922
ՍՈՒՍԵՓՅԱՆ ԱՎԱՆ

թիւնների կարգիցն էր և ճորտութեան վերացումը։ Մինչև վաթսունական թուականները թէև Ռուսաստանում դեռ բնական տնտեսութիւնն էր տիրապետում, թէև կապիտալիստական արդիւնաբերութիւնը դեռ սաղմի մէջ էր գտնուում, այդուամենայնիւ եւրոպական երկրներում փոփոխուած տնտեսական պայմանները իրանց ալիքները տարածելով, Ռուսաստանի մէջ էլ մի յայտնի չափով, նոր կարգերի փոփոխութեան պահանջ էին ծագեցրել։ Եթէ Խրիմի պատերազմը չլիներ, կամ եթէ Ռուսաստանն էլ, դիցուք Չինաստանի նման, առաջադէմ երկրների հետ սերտ յարաբերութիւն չունենար, շատ հաւանական է, որ դեռ երկար ժամանակ շարունակէր իր բնական տնտեսութեամբ ապրելը, բայց այդ պատերազմից յետոյ, իսկոյն աչքի ընկան վերոյիշեալ նոր ծագած պահանջները, ամենից առաջ երկրի մէջ հաղորդակցութիւնը լաւ միջոցների՝ երկաթուղիների բացակայութիւնը զգացուց, յետոյ այն, որ երկիրը դրամով ադքատ էր, լաւ բանակամարտերը հայրն ունենալու համար, մինչդեռ Եւրոպայում ամեն ինչ դրամով էր կատարուում։ Նկատուեց որ բնական տնտեսութիւնը անկարող էր կառավարչական բիւջէաը լրացնել, որովհետև հողատէր ազնուականներ իրանք էլ փոքի մեծ կարօտութիւն ունէին, իսկ գիւղացիներից չէր կարելի ոչինչ ստանալ. քանի որ նրանք մեծ մասամբ ճորտեր էին։ Երկրում խոշոր արդիւնաբերութիւն չկար, իսկ այս վերջինին մի առանձին դարկ տալու և առատ դրամ ունենալու համար, անհրաժեշտ էր շուտով ազատել ճորտերին և ժամանակի պահանջի համաձայն կարգեր հաստատել. .

Այս պատմական մեծ պրոցեսը կատարուեց 60-ական թուականներին, որից յետոյ միայն Ռուսաստանում սկսւում է կապիտալիստական արդիւնաբերութեան շրջանը, այն ինչ արևմտեան եւրոպական երկրներում այդ շրջանը սկսել էր XVIII դարի վերջերից և XIX դարի սկզբներից։ Կընշանակէ, 60-ական թուականներին Ռուսաստանի ճեբքին տնտեսական կեանքը դեռ այնպիսի պայմանների մէջ էր գտնւում, որոնց մէջ արևմտեան երկրները գտնւել էին դրանից շատ առաջ։ Եւ որովհետև գաղափարը կամ մարդոց աշխարհահայեցողութիւնները օդից կախւած բաներ չեն, որտեղից մարդիկ կարողանային պատրաստի վերցնել, այլ նրանք ծագում ու զարգանում են կեանքի ու ժամանակի աղդեցութեան տակ, ուստի շատ բնական է, որ XVIII դարի վերջերում ապրող գիտնականները բոլորովին տարբեր ընդէպներ էին առաջարկում մարդկութեանը, քան XIX դարի սկզբներում ապրողները. ճիշտ միևնոյն պատճառով էլ շատ բնական ու հասկանալի է դառնում, 60—70 ական թուականների, ռուսաց յետամնաց կեանքի ապրող, տաղանդաւոր Չերնիշևսկին և միւս մտածողները իրանց էսկական ուսուցիչներից բոլորովին տարբեր դաղափարներ ու տարբեր աշխարհահայեցողութիւններ ունէին։ Եւ այն ժամանակ, երբ, ինչպէս վերևում ասացինք, Լասալը ամբողջապէս բանուորական խնդրով էր զբաղւած, Չերնիշևսկին գիւղական համայնքներով էր ոգեսորւում։ Այն ժամանակ երբ Տնտեսական Մատերիալիզմը Եւրոպայում զրաղեցնում էր բոլոր յառաջադէմ կուսակցութիւններին, Ռուսաստանի արմատականները միշտ իդիոլոգներ մնալով, այն ընդէպ-

ներն էին առաջարկում իրանց հայրենիքին, ինչոր եւրոպացիները առաջարկել էին դեռ XIX դարի սկզբներում։

Արդ ընդէպների իմաստը կարելի է անփոփել հետեւեալ կերպով, քանի որ մարդկութիւնը թշւառութիւնից ու տառապանքներից ազատելու և ընդհանուրին հաւասար երջանկութիւն ու բարեկեցութիւն տալու համար, Սէն-Սիմոն, Ֆուրիէ և միւսները ասում են, որ հարկաւոր է այնպիսի հասարակական կազմակերպութիւն ստեղծել, որտեղ հասարակութեան անդամները հաւասարապէս աշխատեն և հաւասարապէս վայելեն իրանց աշխատանքի պտուղները, և քանի որ ռուսաց գիւղական համայնքները ու արհեստաւորական արտելներ ճիշտ այդպիսի սկզբունքներով կառավարւող հասարակութիւններն են, ուրեմն ինչու սպասել կամ թոյլ-տալ, որ այդ հիմնարկութիւնները բայքայւեն և ապա նորից հաստատւին, մինչդեռ շատ հեշտութեամբ կարելի է դրանց զարգացնել, փոքր ինչ ազնւացնել, բաղաքակրթւած կերպարանք տալ, աւելի ընդարձակել և ահա դրանցից կստեղծւի այն ըղձալի հասարակական կազմակերպութիւնը, որի վրա այնքան գլուխ են յոգնեցրել Եւրոպայի առաջադէմ մարդիկը...

Ո՞չափ հրապուրիչ և միանգամայն խրախուսիչ մրքեր։ Կընշանակէ ռուսաց կեանքի յետամնացութիւնը հէնց նրա երջանկութեան՝ աղբիւրը պիտի դառնայ. մինչ յիմար եւրոպացիները ահագին տանջանքների միջից անցնելուց յետոյ միայն պիտի վերջիվերջոյ վերադառնան համայնական կազմակերպութեան, Ռուսաստանում այդ կազմակերպութիւնն արդէն վաղուց գոյութիւն ունի։ Ուրեմն, մի՞թէ սխալւում էին սլաւիանոֆիլները, երբ ասում էին

թէ՝ վերջիվերջոյ Եւրոպան պիտի հետևի Ռուսաստանի օրինակին...

Եւ ահա այդպիսի ուսուցիչների ազդեցութեան տակ, 60-ական թուականներից սկսած, Ռուսաստանում մի տեսակ գիւղացիական-մուժիկի- կոյլտ է սկսում: Առաջադիմական կուսակցութեան հրապարակախօսները, սոցիալիզմներն ու քաղաքատնտեսները քարոզում են երիտասարդութեանը՝ գնալ ռամիկ ժողովրդի մէջ մտնել, նրանց հետ ու նրանց կեանքով ապրել, դիտութեան ղէնքերով ցրուել ռամիկի նախապաշարումները, սնոտիապաշտութիւնները, իրանց մաքուր և ազնիւ օրինակով ազնուացնել ու բարեկրթել գիւղացիներին և վերջապէս, աշխարհի շարն ու բարին նրանց սովորեցնելով, աւետել մօտակայ գալիք երանութեան օրերի մասին: Այդ ժամանակներից սկսած՝ մուժիկը ռուս բանաստեղծների ու վիպասանների ամենագլխաւոր նիւթն է դառնում. ուսումնասիրւում է գիւղական կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով, իսկ գիւղացին իր հոգու բոլոր ելևէջներով: Երիտասարդութիւնը հպարտացած իր մեծ կոչումով, ինքնավստահութեամբ արձագանք է տալի իրան կոչող ձայնին. նրանք խմբերով թողնում են քաղաքների փափուկ կեանքը, ցրւում են հեռաւոր գիւղերը, ապրում և գործում են այնպէս, ինչպէս իրանց ուսուցիչներն են պատուիրում. մի խօսքով՝ սկսւում է մի ընդհանուր և չափազանց ոգևորիչ շարժում, որ տևում է մինչև 80-ական թուականները... Մինչև օրս էլ թէ ռուս և թէ հայ երիտասարդութեան մեծամասնութիւնը այդ միևնոյն գաղափարներով է սընուում ու զարգանում: Եւ ո՞ւմ չեն կրթել ու ոգևորել Ն.

Միխայիլովսկի, Վ. Վ. Նիկոլայ-օն, Չչագով, Պ. Լ. Չչեդրին, Ուսպենսկին, Նադսոն և այլն և այլն:

Բայց ցաւալին այն է, որ պատմութիւնը Ռուսաստանի վերաբերեալ նոյնպէս անողոք գտնուեց, ինչպէս անողոք էր արևմտեան Եւրոպայի վերաբերեալ: Չընայած բոլոր թափած ճիգերին, չընայած զոհաբերութիւններին ու աշխատութիւններին, փոխել պատմութեան ընթացքը և շուտ տալ նրա տնիլը — ոչինչ, բոլորովին ոչինչ չըյաջողուեց: 60-ական թուականների Չերնիշևսկի և 70-ական թուականների Ն. Միխայիլովսկիի պաշտպանած ու փառաբանած գիւղական համայնքները ճակատագրական կերպով սկսեցին քայքայուել, ինչպէս քայքայուել, էին նրանք Գերմանիայում դեռ 30—40-ական թուականներին: Ճորտութիւնը վերացնելուց յետոյ, այստեղ էլ բոյն գրեց կապիտալիստական արդիւնաբերութիւնը: Իսկ շոգին ու մեքենաները այնպիսի մի մոգական ոյժ ունին, որի առաջ մոմի պէս հալւում են բոլոր նահապետական հիմնարկութիւնները, հաստատութիւնները, սովորութիւնները, մինչև իսկ մարդոց աշխարհայեցողութիւնները...

IV Դեռ ֆէոդալականութեան ժամանակ առաջացած նոր անտեսական ու հասարակական պայմանները, ճորտութեան անկումից և բուժուազիայի տիրապետութիւնից յետոյ, էլ աւելի մեծ ոյժով զարգացան, կապիտալիստական արդիւնաբերութիւնը հսկայական բայլերով սկսեց առաջ գնալ, մի կողմից քայքայում էր գիւղական կեանքը, իսկ միւս կողմից աճում էին քաղաքները: Քաղաքային լուսաւոր կեանքը աւելի հեշտութեամբ խորտակեց գիւղերից եկած ժողովրդի սնոտիապաշտութիւններն ու նախապա-

շարումները, քան այդ կարողացել էին անել իդիոլոգների մեծատատոր խրատները։ Կապիտալիզմը և քաղաքային կեանքը բնական կերպով յղացրին այնպիսի պահանջներ և առաջացրին այնպիսի հիմնարկութիւններ ու հասատաթիւններ որոնց մասին, ֆէօդալականութիւնը չէր էլ երազել, ինչպէս օրինակ հեռագիրը, հեռախօսը, բանկը, բորսան, հիւրանոցները, պանդոկանոցները և այլն։ Գործարանական կեանքը կատարելապէս փոխեց մարդոց նիստ ու կացն անգամ, ինչպէս օրինակ՝ գործաւորների միաժամանակ զարթնելը, գործի գնալը, միաժամանակ ճաշելն ու քնելը։ Կերպարանափոխուած կեանքի համաձայն էլ փոխուեցին և մարդոց աշխարհահայեցողութիւններ. այն ինչ նահապետական կեանքի ժամանակ անբարոյական էր համարւում, այլ ևս բարոյական դարձաւ-a vis versa.

Եւ ահա այդ արդիւնաբերական միջոցների զարգացման ու անտեսական յարաբերութիւնների փոխուելու շնորհով, մարդկային պահանջների, կեանքի գաղափարների և հասարակական կազմակերպութիւնների փոփոխութիւնները խորապէս քննելուց և լաւ ուսումնասիրելուց յետոյ դեռ 40-ական թուականներին Կարլ-Մարքս և Ֆրիդրիխ Էնգէլս պատկառելի գիտնականներ հրաժարուեցին իրանց նախկին իդէալական աշխարհահայեցողութիւններից և հիմք դրին «Ցնտեսական Մատերիալիզմ» անուն կրող փիլիսոփայութեանը։ Այդ փիլիսոփաները իդիոլոգների աշխարհահայեցողութիւնը մարդկային պատմութեան վերաբերեալ, բոլորովին գլխի վրայ շուռ տուեցին կամ, ինչպէս իրանք էին ասում, մինչև այդ ժամանակ գլխի վրայ մանեկող փիլիսոփայութիւնը նրանք ոտքի վրայ կանգնեցրին։

Ընթերցողը արդէն մասամբ տեսաւ, թէ ինչումն են կայանում մատերիալիստական փիլիսոփայութեան գլխաւոր հիմունքները։ Բայց նրան ամբողջացնելու համար մենք կամփոփենք հետեւեալ ձեւով.

Ոչ թէ մարդիկն են իրանց գաղափարներով ստեղծում պատմութիւնը և նրան իրանց ուզածի պէս, այս ու այն ուղղութիւնը տալիս, ինչպէս կարծում էին իդիոլոգները, այլ նա պատմութիւնը—իր նախագծած ուղին ունի, որին մարդիկ անկարող են փոխել։ Ինչպէս տասցինք. գաղափարը օդից կախուած մի բան չէ, որին մարդիկ կարողանային, իրանց խելքի ուժով վերցնել ու նրա համաձայն իրանց համար պահանջներ ստեղծել և, այդ պահանջներին գոհացում տալու համար էլ, նիւթեր արտադրել. այլ ընդհակառակը՝ մարդկային նիւթական պահանջներն են նրանց մէջ այս կամ այն գաղափարը ծագեցնում. որից յետոյ նրանք, այդ պահանջների համաձայն, փոխում, կատարելագործում են իրանց արդիւնաբերութեան եղանակը և միջոցները, իսկ այս փոփոխութիւնն ու կատարելագործութիւնը առաջ են բերում այնպիսի տնտեսական նոր պայմաններ ու հանգամանքներ, որոնց շնորհով, ճակատագրական կերպով փոխւում են և մարդոց տնտեսական յարաբերութիւնները և ապա այս վերջին հանգամանքի ազդեցութեան տակ, բոլորովին բնական կերպով կերպարանափոխւում են նաև երկրի հասարակական, սոցիալական ու քաղաքական կազմակերպութիւնները։ Օրինակի համար, եթէ մարդիկ իրանց ատամոքսի պահանջը չունենային, նրանք ձուկ և անասուններ

որպալու համար, զանազան գործիքներ հնարելու և կատարելագործելու զաղափարն էլ չէին կարող ունենալ։ Եթէ կանանց կամ տղամարդկանց հրապուրելու պահանջը, չըզգացէր, մարդիկ զանազան զարդարանքներ չէին ստեղծիլ իրանց համար։ Եթէ գոյութեան կռիւ պայմանները դժուար չլինէին, մարդիկ իրարու հետ չէին համախմբուիլ ցեղեր, ազգութիւններ ու տէրութիւններ չէին կազմի։ Եթէ երկրագործութիւնը չլինէր, մարդիկ նստակեաց կեանքի չէին սովորիլ և բացառապէս երկրագործութեամբ պարապելու ու «հայրենիքի պաշտպանութեան համար պատերազմողներին» կերակրելու նպատակով, չէր հաստատուիլ գերութիւնը։ Եւ այդ գերութիւնը ու դրանից յետոյ ճորտութիւնը վերացել են քաղաքակրթուած երկրներից, ոչ թէ այն պատճառով, թէ մարդիկ իրանց զաղափարների ազնւանալով, համոզուել են դրանց վատ բան լինելը, այլ պարզապէս նրանից, որ, ինչպէս վերևում տեսանք, տնտեսական պայմանները այնպէս էին փոխուել և այդ պայմանների շնորհով, հասարակական ու սոցիալական կեանքը հետզհետէ այնպէս էր դասաւորուել, որ գերութիւնն ու ճորտութիւնը այլ ևս ոչ միայն անյարմար ու անպէտք էին զգացւում, այլ և նրանք մեծ խոչնդոտներ էին երկրի յետագայ զարգացման համար։ Կապիտալիստական արդիւնաբերութիւնը, վիթխարի գործարաններն ու մեքենաները այնպիսի պահանջներ էին դրել կեանքի առաջ, որ այլ ևս անհնար էր ճորտութիւնը պահպանել. և նա ընկաւ իբրեւ բնական ու ճակատագրական հետեւանք արդիւնաբերական միջոցի զարգացման։

Տնտեսական Մատերիալիզմի փիլիսոփայութիւնը այդ

տեղ կանգ չէ առնում. նա էլ աւելի է առաջ գնում իր ուսումնասիրութիւնների մէջ և, փոխանակ իդիոլոգների ոմանց նման ողբալու և կապիտալիստական արդիւնաբերութիւնը մի շատ վնասակար բան հռչակելու, ցոյց է տալիս, որ կապիտալիզմը իրան վատ և աղետալի կողմերի հետ միասին, ունի նաև շատ լաւ կողմեր։ Բացի դրանից, մատերիալիզմը ցոյց է տալիս, թէ ինչպէս. այդ նոյն կապիտալիստական արդիւնաբերութեան սիստեմը առաջացնում և հետզհետէ զարգացնում է այնպիսի, առաջներից տարբեր ու բոլորովին նոր տնտեսական հասարակական ու սոցիալական պայմանները, որոնք երկրայրի սրի դեր են կատարում, մի կողմից քայքայում-խորտակում են հին հին նահապետական կարգերը, իսկ միւս կողմից մի ուրիշ նոր տնտեսական ու հասարակական կազմակերպութեան համար հող են պատրաստում։ Արդ վերջին ծագած պայմանների հիման վրայ, Մատերիալիզմի հիմնադիրները արդէն զուշակում էին այն ապագայ տնտեսական ու սոցիակական կազմակերպութիւնը, որին ճակատագրական կերպով տեղի պիտի տայ ներկայ կապիտալիստական կազմակերպութիւնը. ինչպէս որ այս վերջինին տեղի էր տուել ճորտութիւնը։

Ի՞նչ—բացականչում է իդիոլոգը.—ուրեմն, մինչև այդ ժամանակ, անհատը ոչինչ անելիք չունի, պատմութեան մէջ նա պիտի ձեռքերը ծալած նստի՞, մինչև որ իրերի ընթացքը իրանց գործը կատարեն։ Կրնչանակէ, մարդիկն էլ նոյն հոլ մեքենաներն էն կեանքի ձեռքում ու պիտի անխօս հպատակուին իրանց ճակատագրին...»

Պիտի հպատակուել, թէ չըպիտի հպատակուել—այդ ու-

բիչ խնդիր է, միայն թէ այդպէս է կեանքը և այդպէս է անողոք պատմութիւնը։ Սակայն եթէ անհատը անկարող է պատմութեան անիւը շուռ տալ ու նրա ուղղութիւնը փոխել, այդ դեռ իհարկէ չէ նշանակում, թէ նա—անհատը—ոչ մի կատարելիք գործ չունի։ Ամենից առաջ, անհատը պէտք է բոլորովին անաչառութեամբ որոշի ու ըմբռնէ պատմութեան գծած ուղին, պիտի ուսումնասիրէ ու հասկանայ նրա ներկայ շրջանի ստեղծած հանգամանքները, պայմանները և ամէն կերպ ջանալով յարմարուել այդ հանգամանքների հետ, ամբողջ ուժերով պէտք է աշխատի, որ մարդկութիւնը կարելի եղածին չափ շատ և հաւասարապէս օգուտ դրանցից։ Դարերից իվեր մարդկութիւնը ձգտել է ու ձգտում է կարելի եղածին չափ ինչ աշխատանքով կարելիին չափ մեծ բարօրութիւն ունենալ։ Եւ արդէն արդիւնաբերութեան միջոցների զարգացումը, շոգին, էլեկտրականութիւնը մեքենաները, աշխատանքի բաժանումը կայն—բոլորն էլ այդ տենդենցիան ունին և այդ նպատակին են ձգտում։ Ուրեմն, մի՞թէ անհատի համար աւելի նպատակայարմար չէ, որ նա փոխանակ իրերի ձգտումը արգելելու ապարդիւն ճիգերը թափելը, յարմարի պատմութեան ընթացքին և իր աշխատութեան եղանակը այնպէս ուղղի, որպէսզի իրերի— այդ քիչ աշխատանքով մեծ բարօրութիւն ձեռք բերելու—տենդենցիայից կարողանան օգուտ, ոչ թէ փորրամասնութիւնը, «արտօնեալները» միայն, այլ մարդկութեան մեծամասնութիւնը ընդհանրութիւնը... Մի՞թէ դա փոքր և չնչին աշխատանք է անհատի համար *)։ Մի

*) Е. А. Соловьевъ „Роль личности въ исторіи

որամիա քաղաքատնտեսի հաշուելով, որի անունը չենք մտաբերում,—այս բոպէին մեքենայագործութիւնը և տեխնիկան այն աստիճան զարգացած են, որ եթէ միմիայն Աստրիայի ժողովուրդը աշխատի օրական 10 ժամ, կարելի կըլինի ամբողջ Եւրոպայի բոլոր պէտքերին լի ու լի բաւարարութիւն տալ։ Իսկ եթէ, ուրեմն, Աստրիայի ժողովրդի հետ միասին աշխատեն և Գերմանիայի և Ֆրանսիայի և այլն ժողովրդները, այն ժամանակ, կարծում ենք, որ նոյն պէտքերը լրացնելու համար հարկաւոր կըլինի աշխատել, ոչ թէ 10, այլ 4, 3 և պակաս ժամ... Եւ մի՞թէ աշխատանքի այսպիսի խնայողութիւնը պակաս բարիք է մարդկութեան համար։

Հասարակ մահկանացուի լեզուով խօսելով, տնտ այսպէս կարելի է ձևակերպել և անփոփել Տնտեսական Մատերիալիզմ, փիլիսոփայութիւնը։

V. Ինչպէս ասացինք, այդ ուղղութիւնը առաջին անգամ պարզեցին Մարքս և Էնգելսը դեռ 40-ական թուականներին, բայց որովհետև այն ժամանակներում կապիտալիստական արդիւնաբերութիւն, արևմտեան եւրոպական երկրներից ոմանց մէջ անգամ, դեռ ևս այնչափ զարգացած չէր, որ հասարակ մահկանացուներն էլ կարողանային այդ երկու հոգեանների նման պարզ ու որոշ նկատել, տեխնիկայի զարգացման շնորհով ծագող նոր պայմաններն ու հանգամանքները, պատմական իրերի յառաջադիմութեան վերոյիշեալ տենդենցիան, ուստի այն ժամանակներում այդ տեսրիան շատ քիչ հետևող-

и теоріи прогресса“ տես ամսաթերթ „Жизнь“, հատոր IX).

ներ ունեցաւ։ Բայց տենդիկայի հակայաբար զարգանալովը. վերոյիշեալ պայմանների ու տենդենցիայի աւելի ու աւելի պարզուելովը, այդ աշխարհահայեցողութիւնները դաւանող մի ահագին կուսակցութիւն կազմուեց, որ, դնալով. վիթխարի կերպարանք է ստանում։ Իսկ Ռուսաստանում, շնորհիւ իր անաւանական՝ յետամնացութեան, այդ փիլիսոփայութիւնը միայն վերջին տարիներս է սկսել հետեւողներ ունենալ։ Թէև դեռ, 80-ական թուականներին ռուսաց գրականութեան մէջ էլ թոյլ կերպով այդ ուղղութեամբ ձայներ լուեցին, բայց ռուսաց իդիոլոգները կամ, ինչպէս իրանք են անուանում. ժողովրդականները (народники), որոնց գլխաւորներն են Ն. Միխայլովսկի, Վ. Վ. Նիկոլայ-օն և Կ°, իսկոյն հարայ-հրոց գցեցին, թէ Ռուսաստանում կապիտալիստական արդիւնաբերութիւն չկայ, չէ կարող լինել և չպէտք է թոյլ տալ, որ լինի, թէ՝ սխալ է որ պատմութիւնը իր գծած ուղին ունի, որով պարտաւորւած պիտի անցնեն բոլոր ազգերը. դուցէ այդ և մասամբ ուղիղ է Եւրոպայի վերաբերեալ, բայց ոչ Ռուսաստանի. որովհետև այս վերջինը այնպիսի հատատութիւններ ու առանձնայատկութիւններ ունի, որ կարող է կապիտալիզմի աղետարեր պատմական շրջանի վրայից ցատկել և անցնել ուղղակի նրա յետագայ շրջանը։ Վերջապէս սխալ է,—շարունակում են նրանք,—թէ անհատի դերը այդ ասպիճան սահմանափակ է պատմութեան մէջ. մարդիկ շատ հեշտութեամբ կարող են պատմութեան անիւը շուռ տալ. եթէ միայն շուտով հասկանան ու ըմբռնեն նարոդնիկների ասածները...

Սակայն, հակառակ ռուս իդիոլոգների բոլոր աշխա-

տանքներին ու ջանքներին, պատմութիւնը Ռուսաստանում էլ շարունակեց իր գծած ուղիով ընթանալ և այդ երկիրն էլ մեր աչքերի առաջ խոշոր արդիւնաբերական երկրների շարքն է անցնում։ Իսկ դրա հետեւանքն այն է, որ Տնտեսական Մատերիալիզմը այստեղ էլ հետզհետէ հետեւողներ է գրաւում և այսօր այդ ուղղութիւնը ռուսաց գրականութեան մէջ մի շատ պատկառելի տեղ է բռնում։ Բայց զարմանալին այն է, որ ծերունի ժողովրդականները, չըկարողանալով իրանց իդիոլոգիական աւանդութիւններից հրաժարուել, ոչ մի կերպ չեն ուզում համաձայնուել երիտասարդ մատերիալիստների հետ և ամենայն յամառութեամբ շարունակում են պնդել, թէ Ռուսաստանը բոլորովին տարբեր երկիր է ու պատմութեան մէջ բոլորովին տարբեր դեր ունի կատարելիք։ Ի զուր են երիտասարդ ուսումնասէրները աշխատում, դեռ երեկուան իրանց ուսուցիչներին ապացուցանել, թէ Ռուսաստանն էլ արդէն կապիտալիստական սիստեմով արդիւնաբերող երկիր է դառել, թէ ժողովրդականների ասածները կամ առարկութիւնները բոլորովին նորութիւն չեն, թէ՝ արևմտեան Եւրոպայի իդիոլոգներն էլ մինչ մինենոյն առարկութիւններն ու փաստերն էին ներկայացնում դիցուք Ֆրանսայի վերաբերեալ, երբ այդ երկրի մէջ էլ խոշոր արդիւնաբերութիւնը դեռևս այսօրուան աստիճանին չէր հասել։ Ուսուցիչները ոչինչ չեն ուզում լսել և էլ աւելի են զայրանում, որ երեկուան, իրանց լսող ու իրանցմով ոգևորուող, աշակերտները այսօր իրանց հետ վէճի են կանգնել ու չեն համաձայնում իրանց հետ։ Եւ այստեղից մի շատ հետաքրքիր ու միևնոյն ժամանակ խղ-

ճալի տեսարան է ստացւում. մի կողմից՝ երիտասարդ Բէյլտով, Սարուվէ, Տուգան-Բարանովսկի և ուրիշներ, որոնք, զինուած գիտութեան ու կեանքի վերջին փաստերով, աւելի պաղարիւն, աւելի մեղմ, խոկերբեմն ծաղրող ու հեղնական ոճով մատերիալիզմի նոր տեսրիան ու աշխարհհայեցողութիւններն են բարոզում և ապացուցանում, իսկ միւս կողմից՝ ծերունի Ն. Միխայլովսկին իւրայիններով, աւելի զրգռուած ինքնասիրութիւնը վիրաւորուած զայրացկոտ եղանակով շարունակում են նրանց հին իդեալիզմի տարգիցիաները պաշտպանել։ Թէև առաջին կուսակցութիւնը համեմատաբար դեռ փոքր է և աւելի անոնդաստ հանդամանքների մէջ է գործում, այնուամենայնիւ, կասկած չկայ, որ վերջիվերջոյ յաղթութիւնը այդ կուսակցութեանը պիտի լինի... Այդ, անխիղճ և անողոք են կեանքն ու պատմութիւնը, նրանք, վերացական գաղափարների նման, կանգ առնել չըգիտեն, այլ միշտ փոխւում, զարգանում ու առաջ են գնում։ Վայ նրան, ով չէ կարողանում ժամանակին ընդունել իր պատմական շրջանը ու իր շրջապատող կեանքի ոգին ու պայմանները. այդպիսի մարդն որչափ էլ ազնիւ ու վեհ ձգտումներ ունենայ, դարձեալ չէ կարող առաջադիմական դեր խաղալ պատմութեան մէջ։ Այն ինչ 20—30 տարի առաջ համարւում էր առաջադիմական, այսօրւան համար այլևս պահպանողական է դառել։ Ահա այդ է պատճառը, որ ռուսաց գրականութեան 70—ական թուականների հսկան, վաղեմի ամենաարմատական Ն. Միխայլովսկին և միւս նարոդնիկները. որոնցմով մինչև այսօր էլ դեռ հմայւում ու ոգեւորւում են ռուս և թէ հայ երիտասարդներից շա-

տերը, ծաղրի ու հեղնութեան են ենթարկւում երիտասարդ գիտնականների կողմից, իբրև պահպանողականներ, գիտութեան օրէնքները լաւ չհասկացողներ հայլն։ Եւ յիրաւի. արևմտեան եւրոպական երկրների օրինակը, Ռուսաստանի ներկայ տնտեսական ու հասարակական կեանքի մէջ մտնող նոր ու նոր փոփոխութիւնները, մի խօսքով՝ ամէն բան, աւելի ու աւելի պարզում և հաստատում են Տնտեսական Մատերիալիզմի ճշմարտութիւնը...

Ցանկալի է, որ մեր մամուլն էլ (մեր խօսքը բացառապէս Ռուսաստանի հայ մամուլի մասին է) փոքր ինչ աւելի հետաքրքրւէր մատերիալիզմի աշխարհհայեցողութիւններով և այն չափազանց հետաքրքիր ու խրատական վէճերով, որ այժմ տեղի են ունենում ռուսաց մամուլի մէջ։ Ինչպէս սկզբում ասացինք, մեր երկիրը չափազանց սերտ կապերով է կապած Ռուսաստանի հետ և նա էլ արդէն սկսել է կապիտալիստական արդիւնաբերութեան շրջանի մէջ ոտք դնել։ Ցանկալի է, որ տնտեսական մատերիալիզմին լաւ ծանօթ և ձեռնհաս երիտասարդները հրապարակ դուրս գան, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական յօդուածներով, մեր աղքատիկ գրականութեան մէջ էլ սկսեն այդ աշխարհայեցողութիւնները և մեր կեանքի մէջ նոր ծագող տնտեսական ու սոցիալական խնդիրները։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏ
С.С.Р.А. ՍՍՀՄ
7/31 1922
ԱՄԱՆԱ. МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ՆՈՅՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽՍՈՒՄ Է ԱՏՐՊԵՏԻ

ՎԻՊԱԿԱՆ

ԱԼՄԱՍ Թրքահայերի կեանքից երկրորդ տպագրութիւն
Երկու հատոր, իւրաքանչիւրի գինն է 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 դր.

ԽԵՒ - ԿԵՐԵՊԵՏ. Թրքահայ. կեանքից „ 1 ր. 5 „

ՀՈՌ - ԵՂԻԿ „ „ „ 30 կ. 30 շհ.

ՄԱՆՈՅ „ „ „ 30 կ. 30 շհ.

ԽՐԱՆՆԵՐ „ „ „ 30 կ. 30 շհ.

ԵՐՍԱԻ ԸՌԱՔԻԼԸ „ „ „ 25 կ. 25 „

ԴՈՒԼՈՒՄԲԱՋԻՆԵՐ „ „ „ 10 կ. 10 „

ԻՒՐՔԵՐԼՈՅՑԻ ԴԵՂՏՆԻՔԸ „ „ 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 դրան

ԱՒԻՀԻՐ 77-8 թ. Ռուս Թուրք կռուից արկած 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 դրան

ՊԱՏԿԵՐՆԵՐ Տասը Պատ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ր. 10 զռ.

ԼՈՊԱԿՆԵՐ Երկու վէպ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ռ.—կամ 10 դր.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՄԻՇԸՆ Երեք արարած. Թրքահայ կեան. 1 ր. [illegible] զռ.

ՇՐՐԵՓ Հինգ „ „ „ 30 կ. 30 շհ.

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲԼԻՓԵԹ Պատմական տեսութիւն. 30 [illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0152967

ԾԱԽԻՈՒՄԷ

ՀԵՂԻՆԱԿԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ. ԿԱՈՒՑԿԻ Կոլոնիական Քաղաքականութիւնը

Գինն է 2 ղր. 40 կ.

Ֆ. ԿՕՊՊԷ Հէնրիէs վ.պ —

Գինն է 3 ղր. 50 կ.

ԳԻՆՆ Է

10 շահի կամ կոպ 10.